

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԱՍԵՐԸ
(վերլուծություն երեսուն տարի անց)

ՀԱԿՈՐՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Գավառի պետական համալսարանի դասախոս*

Մարդկային հասարակությունը, իր գոյության վաղնջական ժամանակներից սկսած, զարգացմանը զուգընթաց ենթարկվում է տարաբնույթ սպառնալիքների ու մարտահրավերների, հարկադրված դիմագրավում բնական, սոցիալական, տեխնիկական ծագում ունեցող աղետների: Առանձնապես ծանր հետևանքներ է առաջացնում երկրաշարժը, որը հաշված վայրկյանների ընթացքում կարող է երկրի երեսից ջնջել քաղաքներ ու գյուղեր, խլել ու խեղել բազմաթիվ մարդկային կյանքեր, պատճառել նյութական մեծ վնաս, հանգեցնել անձնական ու համազգային ողբերգության, անգամ պատճառ դառնալ քաղաքակրթությունների ոչնչացման:

Տարբեր ժամանակներում, պայմանավորված հասարակության զարգացման աստիճանով, տարբեր բացատրություններ են տրվել այդ սոսկալի երևույթին՝ սկսած առասպելաբանականից մինչև գիտական: Առաջին անգամ երկրաշարժը երկրակեղևի, ընդերքի ուսումնասիրության հետ է կապել հույն փիլիսոփա Արիստոտելը¹: 18-րդ դարի սկզբին անգլիացի գիտնական Ջոն Միտչելը հիմնավորեց, որ երկրի ցնցումները երկրաշարժի ժամանակ տեղի են ունենում առաձգական ալիքների շարժման արդյունքում²:

Գիտության զարգացումը հանգեցրեց այն եզրակացության, որ ստորգետնյա ցնցման հետևանքով երկրակեղևի որոշակի հատվածում կուտակված էներգիայի շեշտակի լիցքաթափում է տեղի ունենում, որն էլ ընդունված է անվանել երկրաշարժ: Հանրագիտարանային մեկնաբանմամբ՝ երկրաշարժերը գետնաշարժեր են, տարերային ստորերկրյա հարվածներ և երկրի մակերևույթի ցնցումներ³:

Գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրաշարժերն ըստ ծագման կարելի է բաժանել երկու խմբի՝ բնական և տեխնածին: Բնական երկրաշարժերը պայմանավորված են տեկտոնական շարժումների, հրաբուխների, երկրակեղևում կորստային խոռոչների փլուզման և այլ

¹ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/երկրաշարժ>:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հտ. 3, Երևան, 1977, էջ 622:

բնական երևույթների հետ, իսկ տեխնածին երկրաշարժերը մարդկային գործունեության հետևանք են: Օրինակ՝ ռազմական կամ արդյունաբերական պայթյունների հետևանքով առաջացող ցնցումները կարող են շարժիչ ուժ դառնալ ուժեղ երկրաշարժի համար: Կամ մեծ ջրամբարի կառուցումը կարող է հանգեցնել տվյալ տարածքում սեյսմիկ ակտիվության բարձրացման¹: Երկրաշարժերի ուժգնության գնահատման պարզեցված միջազգային սանդղակի (MSK-64) համաձայն՝ ըստ ուժգնության (բալի) երկրաշարժերը դասակարգվում են տասներկու խմբի՝ աննշմարելի, խիստ թույլ, թույլ, չափավոր, բավական ուժեղ, ուժեղ, խիստ ուժեղ, քայքայիչ, ավերիչ, կործանարար, աղետալի, խիստ աղետալի²:

Բնական և տեխնածին աղետներից, ավերիչ, կործանարար ու աղետալի երկրաշարժերից ոչ մի երկիր, տարածաշրջան, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունն ապահովագրված չէ:

Հայաստանը հիմնականում գտնվում է սեյսմիկ գոտում, և գրեթե բոլոր սերունդներն էլ ապրել են երկրաշարժի ահեղ ցնցումների պատճառով սարսափը: Հայաստանի տասներկու մայրաքաղաքներն էլ տարբեր ժամանակներում ավերվել են ահեղ երկրաշարժերից: 1679 թվականի Գառնիի երկրաշարժի հարվածները հասել են Երևան և քարուքանդ արել քաղաքը, սակայն իր ուժգնությամբ և ծանր հետևանքներով առանձնանում է Սպիտակի երկրաշարժը, որի ճիրաններում հայտնվեց երկրի հյուսիսային հատվածը՝ Հայաստանի 40 տոկոսը, և որին զոհ գնաց 25 հազար մարդ, ավերվեց 69 բնակավայր, տուժեցին 363 գյուղ ու քաղաք, անօթևան մնաց 514.000 մարդ³:

Երկրաշարժերի ծագումը և դրանց կանխատեսման հնարավորությունը գիտական լուրջ հետազոտությունների առարկա են: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են երկրաշարժերի կանխատեսման տարբեր ձևեր ու մեթոդներ՝ բնական գործընթացների, կենդանիների վարքագծի փոփոխությունների դիտարկումից մինչև նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հատուկ հետազոտություններ, երկրակեղևի, ընդերքի վիճակի մշտադիտարկումներ⁴: Բնական երևույթների

¹ Երկրաշարժերի մասին մանրամասն տե՛ս Болт Б. А., Землетрясения, М., Мир, 1981, 256 էջ; Understanding and Preparing for Earthquakes, Пер. с англ. Н. В. Шебалина, М., [Мир](#), 1988, 220 էջ; Катастрофы и катаклизмы, Сост. Н. Непомнящий, М. Курушин, М., ОЛМА Медия Групп, 2010, 256 էջ և այլն:

² Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հտ. 3, էջ 623:

³ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Երկրաշարժ>:

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Завьялов А. Д., Среднесрочный прогноз землетрясений: основы, методика, реализация, М., [Наука](#), 2006, 254 էջ; Зубков С. И., Предвестники

փոփոխությունների, ջրի մակարդակի բարձրացման կամ նվազման, օդի ջերմաստիճանի տատանումների, գազային ալիքների, լարումների որոշակի հոսքերի ուսումնասիրությունները ևս առայժմ արդյունք չեն տվել, և այն շարունակում է մնալ գիտության, մասնավորապես ճշգրիտ և բնական գիտությունների մեծագույն բացերից մեկը: Փաստորեն գործնականում երկրաշարժերը հնարավոր չէ կանխատեսել:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ սեյսմիկ աղետները կազմում են բնական աղետների 57%-ը¹: Երկրաշարժը ծանր հետևանքներ է ունենում հատկապես ոչ զարգացած երկրներում, որտեղ սոցիալ-տնտեսական աճը զգալիորեն դանդաղում է, ավելանում է արտագաղթող քաղաքացիների թիվը, պետությունն ու բնակչությունը կրում են ֆինանսական, տնտեսական վիթխարի կորուստներ: Աղետալի երկրաշարժերը հանգեցնում են անդառնալի կամ չվերականգնվող կորուստների, պատճառում վերականգնվող վնասներ: Չվերականգնվող կորուստների թվին են դասվում մարդկային զոհերը, մարդկանց ֆիզիկական խեղումները՝ հաշմանդամությունը, երկրաշարժի տարածքում արձանագրվող ժողովրդագրական բացասական տեղաշարժերը (մարդիկ տեղահանվում են, շատերն այդպես էլ չեն վերադառնում նախկին բնակավայր, հաճախ նվազում է ծնելիության մակարդակը), ավանդույթների, սովորույթների, հոգևոր և նյութական մշակութային արժեքների կորուստը: Վերականգնվող վնասներից կարելի է առանձնացնել աղետյալների տարած սթրեսը, բարոյահոգեբանական ծանր վիճակը, վախն ու հուսալքությունը, անօգնականության և կենսական հեռանկարների կորստի զգացողությունները, ինչպես նաև խարխլված և կիսավեր բնակելի շենքերն ու այլ կառույցները, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար վերանում են և վերականգնվում: Բնակավայրերի կառուցապատումն ի վերջո ավարտվում է, թեև կարող են փոխվել նրանց նախկին դեմքն ու կոլորիտը: Պետությունը մեծ վնասներ է կրում և հարկադրված վերանայում իր ֆինանսատնտեսական ծրագրերը, զարգացման առաջնահերթությունները, վերաբաշխում միջոցները և տարիներ շարունակ (մեր դեպքում՝ երեսուն տարի) առանձին ծրագրեր կազմում աղետի գոտու վերականգնման համար:

землетрясений, М., ОИФЗ РАН, 2002, 140 էջ; Мячкин В. И., Процессы подготовки землетрясения, М., Наука, 1978, 232 էջ; Моги К., Предсказание землетрясений, М., Мир, 1988, 382 էջ; Рикитаке Т., Предсказание землетрясений, М., 1975; Соболев Г. А., Основы прогноза землетрясений, М., Наука, 1993, 312 էջ; Юнга С. Л., Методы и результаты изучения сейсмоструктурных деформаций, М., Наука, 1990, 191 էջ և այլն:

¹ Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 6.12.2003:

Աղետի գոտում ծավալված շինարարական աշխատանքները, շենքերի ու շինությունների կառուցումն ու վերակառուցումը պայմանավորվել են դրանց սեյսմակայունության աստիճանի բարձրացմամբ: Անհրաժեշտաբար գնահատվել են սեյսմիկ վտանգն ու հնարավոր ռիսկերը՝ շենքերի, շինությունների և բնակավայրերի խոցելիությունը նվազեցնելու նպատակով¹: Երկրաշարժերի, բնական մյուս աղետների հետևանքների վերացումը և՛ երկար ժամանակ, և՛ ռեսուրսներ է պահանջում: Եվ որքան էլ հետևանքները վերացվեն, միևնույն է, երկրաշարժը ծանր հետք էթողնում աղետի գոտու զարգացման և մարդկանց բարոյահոգեբանական վիճակի վրա: Այդ առումով անդառնալի կորուստներ և ծանր հետևանքներ ունեցավ 1988 թվականի Սպիտակի երկրաշարժը, որի հասցրած վերքերը մինչ օրս ամոքված չեն:

Պետք է արձանագրել, որ առաջին անգամ խորհրդային քարոզչամեթոդների չաղավաղեց իրականությունը, և պետության ղեկավարը ներկայացրեց աղետի իրական չափերն ու դիմեց աշխարհին՝ օգնության խնդրանքով: Շատ երկրներ առաջին անգամ օգնության եկան խորհրդային պետությանը: Յուրաքանչյուր 12 րոպեն մեկ բեռնված օդանավերը վայրէջք էին կատարում Հայաստանում: Խորհրդային Միության բոլոր հանրապետությունները օգնության ձեռք մեկնեցին՝ մեզ հասած պատուհասը մեղմելու համար:

Սպիտակի երկրաշարժը ոտքի հանեց ողջ հայությանը, Սփյուռքը բռունցքվեց հանուն հայրենիքի: Այդ օրերին համախմբվածության, նվիրումի և կազմակերպվածության օրինակ դարձան հատկապես Հայաստանի երիտասարդական կազմակերպությունն ու նրա կառույցները, որոնք հայտնվել էին աղետի հետևանքների վերացման գործողությունների կիզակետում: Համազգային ցավի և ողբերգության մեջ Հայաստանի երիտասարդությունը ինքնամոռաց և անօրինակ խիզախություն դրսևորեց աղետի գոտում և օդանավակայանում, շտաբներում ու հիվանդանոցներում, զօրուգիշեր փլատակների մոտ արեց հնարավորն ու անհնարինը՝ մարդկային կյանքեր փրկելու, աղետյալներին սատար կանգնելու համար: Հիշատակման են արժանի հատկապես բժշկական ինստիտուտի ուսանողները:

Հայաստանի երիտասարդական կազմակերպության ղեկավար մարմինը՝ ՀԼԿԵՄ կենտկոմը, վերածվեց երկրաշարժի հետևանքների վերացմանը նպաստող մի յուրօրինակ շտաբի: Նրա նախաձեռնությամբ

¹Տե՛ս Բալասանյան Ս., Նազարեթյան Ա. Սեյսմիկ պաշտպանությունը և նրա կազմակերպումը, Գյումրի, 2002:

բացվեց աղետոյալների օգնության բանկային հաշվեհամար, և նա առաջինը մեկ միլիոն ռուբլին փոխանցեց այդ հաշվեհամարին:

Հազարավոր կոմերիտականներ պայքարում էին աղետի ծանր հետևանքների վերացման համար: Նրանք, ջոկատներ կազմած, մասնակցում էին շինարարական աշխատանքներին: Ուսանողները միավորվել էին ուսանողական շինջոկատներում (ՈԻՇՋ), «Որոնում» ծառայության միջոցով փնտրում և գտնում էին կորած մարդկանց՝ հատկապես երեխաներին: Երիտասարդները լծվել էին աշխարհի տարբեր ծայրերից Հայաստան ժամանող հարյուրավոր ինքնաթիռների բեռնաթափման և օգնությունը տեղ հասցնելու աշխատանքներին: Նրանք էին կամավորական փրկարարական ջոկատների կազմակերպիչներն ու անդամները, և հենց այդ ջոկատները հետագայում հիմք հանդիսացան «Սպիտակ» փրկարարական ջոկատի, ապա համապատասխան պետական կառույցի ստեղծման համար:

Երեսուն տարի անց, քաղաքական և իրավական տեսանկյուններից վերլուծելով Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացը, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը, լինելով ԽՍՀՄ մի մասը, բոլորովին պատրաստ չէր աղետների դեմ պայքարին, չկար աղետի հետևանքների վերացման համակարգ, և որևէ կառույց չունեի համապատասխան պատրաստվածություն և փորձ: Այդ առնչությամբ անհրաժեշտ է առանձնացնել երեք խումբ հարցեր՝ երկրաշարժի դասերը, դրանցից բխող պետական քաղաքականությունը և ապագային միտված ծրագրերը:

Սպիտակի երկրաշարժից երեսուն տարի անց կարելի է առանձնացնել հետևյալ հանգամանքները, որոնցից դասեր պիտի քաղել ապագայի համար.

1. Խորհրդային Միության քարոզչամեքենայի կեղծ բնույթը, որն ամենուր տարփողում էր խորհրդային պետության առավելությունները և դրանց հակադրում «փտող, նեխող» կապտալիզմի բացերը: Անգամ Չեռնոբիլի աղետից հետո ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը քողարկվեց բնակչությունից, և շատերը ժամանակին չտարհանվեցին ու ճառագայթման հետևանքով անժամանակ կնքեցին իրենց մահկանացուն:

2. Խորհրդային երկրում գրեթե անուշադրության էին մատնված սեյսմիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Շինարարական աշխատանքները հիմնականում կատարվում էին նորմատիվներից և հաստատված փաստաթղթերից էական շեղումներով ու անթույլատրելի սխալներով: Թերագնահատվում էր երկրաշարժերի հնարավոր վտանգը՝ դրանց ուժգնությունը հաշվարկելով 2-3 բալով պակաս: Անտեսվում էր

սեյսմիկ գոտում բարձրահարկ շենքերի կառուցման արգելքը: Հայաստանում շինարարությունը կատարվում էր ԽՍՀՄ չափորոշիչներին համապատասխան, որոնք, հիմնականում մշակվելով Մոսկվայում, հաշվի չէին առնում Հայաստանի սեյսմիկ ռիսկերը (ռեյիեֆը, գրունտային ջրերը, շինարարական նյութերը, այլ գործոններ):

3. Չկար վերահսկողություն ընդերքի և կառույցների ճշգրիտ շահագործման գործընթացների նկատմամբ: Մշակված չէին աղետի ենթարկված տարածաշրջանի վերականգնման, անհրաժեշտ օգնության, արագ վերակառուցման հնարավոր ռեզերվային պլան-ծրագրեր, որոնք խիստ անհրաժեշտ էին՝ հաշվի առնելով երկրի սեյսմավտանգավոր իրավիճակը:

4. Բացակայում էին բնակչության ուսուցման, տեղեկատվության տրամադրման, վարժանքների ու փրկարարական աշխատանքների պատշաճ կազմակերպման, հնարավոր աղետի մասին ահազանգման համակարգերը: Ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև միութենական հանրապետություններում չէին գործում արագ արձագանքման կառույցներ, փրկարարական ջոկատներ, բնակչությունը չունեի տարրական գիտելիքներ վտանգին դիմակայելու, տուժածներին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ, որոնք էլ հանգեցրին զոհերի և խեղված մարդկանց թվի աճին:

5. Հստակ չկազմակերպվեցին տեղական և արտասահմանյան օգնությունների հասցեական բաշխումը, օգտագործումը և դրանց նպատակային կիրառումը, որը բացասական արձագանք գտավ աղետի գոտու բնակչության շրջանում:

6. Գոյություն ունեին աղետի գոտու վերականգնման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ: Օբյեկտիվ գործոններ էին ԽՍՀՄ-ի փլուզումը, Հայաստանի անկախացումը և դրանց հետ կապված անցումային բարդ ժամանակահատվածը, Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը, վառելիքաէներգետիկ ճգնաժամը, շրջափակումը, տնտեսական և այլ համակարգերի քայքայումը, որոնք էական վնաս հասցրին աղետի գոտու վերականգնման աշխատանքներին, խափանեցին հաստատված ծրագրերի իրականացումը:

7. Վերականգնման ընթացքում թույլ տրվեցին սխալներ, միջոցները ոչ միշտ օգտագործվեցին նպատակային ձևով: 1991թ.-ին ԽՍՀՄ մաս կազմող հանրապետությունների շինարարական կազմակերպությունները հեռացան աղետի գոտուց՝ կիսատ թողնելով կամ այդպես էլ ավարտին չհասցնելով սկսած գործը:

8. Առաջացավ հետերկրաշարժյան խառնաշփոթ իրավիճակ, տեղի չունեցավ ուժերի արագ մոբիլիզացիա՝ տուժած բնակչության արդյունավետ

օգնության կազմակերպման, արտակարգ իրավիճակից օպերատիվ ելքեր գտնելու համար: Համապատասխան կառույցների, պատրաստված անձնակազմի բացակայությունը հանգեցրել էին նրան, որ բնակչության տեղափոխման, տեղավորման, կենցաղային և բազմաթիվ այլ խնդիրներ համակարգված չէին լուծվում, ամեն ինչ տարերային բնույթ էր կրում: Անկախացած Հայաստանը հայտնվել էր քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակում, երբ մի կողմից պետք է ձևավորեր նոր պետության հիմքերը, սատարեր Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարին, տեղավորեր և տանիք տար Ադրբեյջանից բռնագաղթված 400 հազար փախստականների, իսկ մյուս կողմից՝ իրագործեր պետական ծրագրեր՝ ուղղված երկրաշարժի հետևանքների վերացմանը, կես միլիոնից ավելի մարդկանց բնակարանային խնդիրների լուծմանը:

Երկրաշարժի ցավալի դասերից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկվեցին միջոցառումներ, իրականացվեցին ծրագրեր, և հիմք դրվեց սեյսմիկ քաղաքականությանը:

ա) 1991թ.-ին ստեղծվեց Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն, որը մշակեց պետական ռազմավարություն՝ սեյսմակայունության ապահովման ազգային չափանիշներ, երկարաժամկետ ազգային ծրագրեր, ոլորտային իրավական նորմեր: Սակայն դեռ շատ անելիքներ կան՝ հուսալի պաշտպանական համակարգ ունենալու համար:

բ) 1994թ.-ին ՀՀ կառավարության կողմից մշակվեց «Աղետի գոտու վերականգնման և շինարարական աշխատանքների հանրապետական նպատակային ծրագիր»: Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիրն ուժի մեջ մտավ 1998թ.-ին: 2001թ.-ին ընդունվեց «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիր», որով պետությունն ուղղակի մասնակցություն ցուցաբերեց երկրաշարժից տուժած բնակավայրերի բնակիչների բնակարանային և սոցիալական ոլորտի խնդիրների լուծմանը: Պետությունը պարտավորություն ստանձնեց անօթևան ընտանիքներին ապահովել բնակարաններով: Սակայն հարկ է նկատել, որ երկրաշարժից երեսուն տարի անց աղետի գոտում առկա են տնակներում ապրող ընտանիքներ, որոնց բնակարանային խնդրի լուծումը օրախնդիր պահանջ է:

գ) Այս ընթացքում մշակվեցին գրեթե բոլոր քաղաքների, այդ թվում՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի միկրոշրջանցման քարտեզներ, որոնք քաղաքների գլխավոր հատակագծերի մասն են կազմում:

դ) Հայաստանում կառուցվող շինությունները համապատասխանեցվեցին ինը բալանոց երկրաշարժի դիմակայությանը:

ե) 2008թ.-ին ստեղծվեց ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, որին վերապահվեցին բնական աղետների

կանխարգելման և հետևանքների վերացման խնդիրների լուծման հիմնական գործառույթները:

զ) Էական բարեփոխումներ կատարվեցին առողջապահական համակարգում՝ միտված աղետի գոտում օպերատիվ բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը, առաջին բուժօգնության կազմակերպմանը:

Այսպիսով, Հայաստանում կա պետական քաղաքականություն, գործում են համապատասխան իրավանորմեր ու սկզբունքներ, հսկայական աշխատանքներ են կատարվել երկրաշարժից տուժած բնակավայրերում, սակայն արդյունքները գոհացուցիչ և վերջնական համարել չի կարելի: Կան իրավական և քաղաքական լուծումներ պահանջող շատ ու շատ հարցեր: Երկրաշարժի հետևանքների վերացումը ոչ միայն ուղղված է շենք-շինությունների վերակառուցմանը, վնասված ենթակառուցվածքների վերականգնմանը, այլև բնակչության սոցիալ-հոգեբանական վիճակի առողջացմանը:

Յավալի է, որ թեև առկա է պետական քաղաքականություն, այդուհանդերձ Սպիտակի երկրաշարժից երեսուն տարի անց էլ ամբողջապես չեն վերացվել աղետի հետևանքները: Ուստի

1. անհրաժեշտ են քաղաքական կամք և ֆինանսական միջոցներ՝ մշակելու և իրականացնելու աղետի գոտու վերածննդի վերջնական ծրագիր:

2. Կարծես տարեցտարի թուլանում են հնարավոր երկրաշարժերի հանդեպ վախը, զգոնության և պատասխանատվության զգացումները, քաղաքաշինական ակտերի և նախագծանախահաշվային փաստաթղթերի նորմերը մնում են թղթի վրա, փոխարենը ավելանում են շեղումներն ու անճշտությունները շինարարական ծրագրերն իրականացնելիս, իսկ վերահսկողական ծառայությունները պատշաճ հսկողություն չեն իրականացնում:

3. Երևանում, Հայաստանի Հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, արևմտյան քաղաքաշինական և առևտրային մշակույթին համահունչ, շենքերի առաջին հարկերն ու նկուղները մարդիկ վերածում են խանութների, սննդի օբյեկտների, ժամանցի վայրերի, մշակութային կենտրոնների՝ փոխելով և վերածնելով շենքերի հիմքերը, տարածքը հարմարեցնելով իրենց առևտրային գործունեությանը, բիզնես նպատակներին: Հիմնականում առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու հիմնավորումները, սակայն ակնհայտ է, որ տուժում է օբյեկտների սեյսմակայունությունը:

4. Երկրաշարժի հազարավոր զոհերի և մեծ վնասների իրողությունը հարկադրեց իրավասու մարմիններին՝ բնակչությանը հաղորդելու արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության

վերաբերյալ տարրական գիտելիքներ: Սակայն այսօր էլ իրագեկման և ուսուցման խնդիրը լիարժեք չի լուծվում: Այդ գործը պետք է պատշաճ ձևով կատարեն ուսումնական հաստատությունները՝ նախակրթարանից մինչև բուհեր, զանգվածային լրատվության միջոցները, որպեսզի մարդիկ տեղեկացված լինեն, թե ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորել երկրաշարժի ժամանակ և դրանից անմիջապես հետո:

5. Գրեթե ուսումնասիրված չեն երկրաշարժից հետո տարածքի բնակչության միգրացիոն շարժերը, աղետի գոտու ժողովրդագրական պատկերը, սովորույթների, ավանդույթների հնարավոր կորուստը, ինչպես նաև աղետի հետևանքով տուժած տարածքների բնակչության բնավորության, հոգեբանության, արժեքների հնարավոր փոփոխությունները: Արտակարգ իրավիճակների համար հարկավոր է ստեղծել հոգեբանական օգնության և բարոյահոգեբանական վերականգնման ծառայություններ: Մեկ օրինակի վերլուծությունը աներկբա վկայում է դրանց անհրաժեշտության մասին. երկրաշարժից հետո աղետի գոտում երիտասարդական կազմակերպության կողմից կազմակերպվեց նկարների մրցույթ: Արդյունքներն ամփոփելիս պարզվեց, որ նկարներում գերակշռող գույնը սևն էր, իսկ մի մանուկ Ձմեռ պապին նկարել էր սև քուրքով, մեկ ոտքով, իսկ փայտը ծառայեցրել էր որպես հենակ:

6. Երկրաշարժից տուժած բնակավայրերում առկա են սոցիալական լուրջ խնդիրներ, մեծ է աղքատության շեմին ապրող և գործազուրկ անձանց թիվը: Երբեմնի արդյունաբերական Գյումրին, Վանաձորը, մյուս բնակավայրերը կքել են տնտեսական դժվարությունների ներքո, խիստ անբավարար են տնտեսական զարգացման միտումները: Հետևաբար սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով պետք է զարգացնել փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, ապահովել տնտեսական գործունեության համար շահավետ պայմաններ:

7. Լուրջ օգնության կարիք ունեն երկրաշարժից տուժած գյուղական համայնքները: Գյուղին անհրաժեշտ են համալիր աջակցության ծրագրեր, հողատարածքների մշակման համար տեխնիկա, պարարտանյութեր, անջրդի հողերի յուրացման միջոցներ, պահուստային հողերի սեփականաշնորհում և դրանց մշակման իրական հնարավորություն և այլն:

8. Անհրաժեշտ է իրականացնել հարկային արտոնյալ քաղաքականություն, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել երկրաշարժից տուժած համայնքների սոցիալ-տնտեսական զարգացում՝ կրճատելով գործազրկությունն ու արտագաղթը:

Իսկ հնարավոր է արդյոք խուսափել երկրաշարժի ցավալի հետևանքներից կամ մեղմել այդ հետևանքները: Կարծում ենք՝ այո՛, եթե

մշակենք ու ընդունենք երկարաժամկետ և համալիր ծրագրեր արտակարգ իրավիճակների համար: Օրինակ՝ 1906թ.-ին Սան-Ֆրանցիսկոյում տեղի ունեցած աղետալի երկրաշարժը գրեթե ամբողջովին ավերեց քաղաքը, խլեց բազմաթիվ մարդկային կյանքեր, իսկ ԱՄՆ կառավարության իրականացրած՝ սեյսմիկ վտանգի նվազեցման լայնածավալ ծրագրի արդյունքում 1989թ.-ին գրեթե նույն տարածքում տեղի ունեցած երկրաշարժին զոհ գնաց միայն 62 մարդ¹ :

Այսպիսով, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում մշակել և հետևողականորեն իրականացնել սեյսմիկ ռիսկերի նվազեցմանն ուղղված պետական հստակ քաղաքականություն՝ որպես ազգային անվտանգության ռազմավարության կարևոր մաս:

Հնարավոր երկրաշարժերի վտանգը հաշվի առնելով՝ դրանց հետևանքները վերացնելու և վնասները կանխելու կամ սահմանափակելու համար պետք է մշակվեն բնակավայրերի աջակցության և վերակառուցման ծրագրեր, ինչպես նաև բնակչության տեղահանման և տեղափոխման հստակ կառուցակարգեր:

Որպես պետական քաղաքականության հիմնավորում անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա պետական ծրագրի և պետական բյուջեի մաս դարձնել ՀՀ սեյսմիկ հիմնախնդիրները, որոնք ըստ ոլորտների պետք է մշակվեն երկրաշարժերի կանխարգելման և հետևանքների վերացման բաղադրիչների ձևով:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սեյսմիկ գոտում և պաշտպանված չէ աղետալի երկրաշարժերի վտանգից, ուստի առաջարկում ենք «Շանթ» ռազմահրամանատարական զորավարժությունների օրինակով երկրում ներդնել «Սպիտակ» տագնապաազդանշանային միջոցառումների ծրագիր, որի շրջանակներում յուրաքանչյուր պետական ու մասնավոր կառույց մանրամասն կիրազելվի երկրաշարժի ժամանակ իր անելիքների մասին:

Քանալի բառեր՝ բնական աղետ, երկրաշարժ, Սպիտակի երկրաշարժ, երկրաշարժի դասեր, սեյսմակայունություն, անվտանգության ապահովում:

¹ Տե՛ս «Ազգ» օրաթերթը, 6.12.2003:

LESSONS LEARNT FROM SPITAK EARTHQUAKE (Analysis: thirty years later)

НАКОВЯН HRANUSH

*Doctor of Law, Professor,
Lecturer of Gavar State University*

The article is dedicated to Spitak earthquake in 1988. The article dwells upon the retrievable and irretrievable losses of the disastrous earthquake, measures taken to overcome the damage, state programs to restore the disaster area, lessons learnt and conclusions resulting from the earthquake. Lessons learnt from Spitak earthquake are discussed thirty years after the disaster. Suggestions are submitted to withstand the consequences of a possible disaster.

Key words: *natural disaster, earthquake, Spitak earthquake, lessons learnt from the earthquake, seismic resistance, security.*

УРОКИ СПИТАКСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ (тридцать лет спустя: анализ)

АКОПЯН ГРАНУШ

*Доктор юридических наук, профессор,
Преподаватель Гаварского государственного университета*

Статья посвящена урокам Спитакского землетрясения 1988 года. Представлены восстанавливаемые и непоправимые последствия катастрофического землетрясения, меры по ликвидации последствий трагедии, государственные программы по восстановлению зоны стихийного бедствия, уроки землетрясения и вытекающие из них выводы. Обсуждаются уроки Спитакского землетрясения спустя тридцать лет после катастрофы. Представлены предложения с целью устранения последствий стихийных бедствий.

Ключевые слова: *стихийное бедствие, землетрясение, Спитакское землетрясение, уроки землетрясения, сейсмостойкость, обеспечение безопасности.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 07.04.2019թ.: